

Ս. Աբրահամյան

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ԵՂԱՆԱԿԱՎՈՐՈՂ ԲԱՌԵՐԸ

Հայ քերականագիտության նվաճումներն այսօր հիմնականում համապատասխանում են լեզվի մասին գիտության զարգացման ժամանակակից մակարդակին։ Սակայն արդի հայերենում կան դեռևս վերջնականապես չլուծված հարցեր, որոնց բավարար լուծումը մեր քերականության ամենահերթական խնդիրն է։ Այդպիսիք են, օրինակ, եղանակավորող բառերը, որոնք մինչև այժմ էլ քերականության գործող դասագրքերում ու ձեռնարկներում (թե՛ զբոսայգիական և թե՛ բուհական) դասվում են մակբայների շարքը։

Եղանակավորող բառերին առանձին տեղ է հատկացրել դեռևս պրոֆ. Մ. Աբեղյանը։ Նա թեև չի վերլուծում այդ բառերի էությունը, չի քննում դրանց հատկանիշները, այնուամենայնիվ վերաբերական իմաստ ունեցող բառերը խմբավորելիս կապակցական բառերից հետո նշում է «Եղանակական բառերը կամ մասնիկները»¹։

Եղանակավորող բառերը մակբայներից զատելու հարցը այնուհետև բարձրացրել է Երևանի Պետական համալսարանի նախկին ուսանող Ռ. Իշխանյանը մակբայներին նվիրված իր ուշագրավ հոդվածում²։ Հեղինակը, զբաղվելով մակբայներով, նկատում է, որ քերականության գործող դասագրքերում տրագիցիոն կարգով մակբայների շարքն են դասվում այնպիսի բառեր, որոնք մակբայներ չեն, այլ եղանակավորող բառեր ու մասնիկներ և առանձնացնում է դրանք։

Իր մի զեկուցման մեջ դոցենտ Ա. Աբրահամյանը ևս գտնում է. «Մեր արդի գրական լեզվում բավականաչափ հիմքեր կան եղանակավորող բառերի կատեգորիայի, ինչպես նաև մասնիկների ճանաչման համար»³, իսկ «Գրաբարի ձեռնարկ»-ում (1952, էջ 316) Աբրահամյանը գրաբարի եղանակավորող բառերը գիտում է որպես բառերի առանձին կարգ՝ խմբավորելով ըստ տեսակների (հաստատական, երկբայական, ժխտական, հարցական, ցուցական)։ Վերջապես այդ հարցին անդրադարձել է Ա. Քյուրքչյանը իր «Հայերենի մակբայներ» գիտատեսիոն աշխատության մեջ, որի ավտոեֆերատին ենք միայն ծանոթ։

Հայոց լեզվի քերականության զարգացման դասագրքերում եղանակավորող բառերը գիտված են որպես ձևի մակբայի մի ենթատեսակ, արդի հայերենի բուհական դասընթացում դրանք չեն հիշատակվում, ըստ երևույթին, բառերի առանձին կարգ կամ խոսքի մաս չհամարվելու պատճառով։

Մակբայների իմաստի վերլուծությունից որոշակիորեն երևում է, որ նրանք ցույց են տալիս խոսողից անկախ գոյություն ունեցող հատկանիշ (հատկանիշի) հանձինս՝ ձևի, չափի, տեղի, ժամանակի։ Մակբայներից տար-

¹ Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1931, էջ 132։

² Ռ. Իշխանյան, Մակբայները հայերենում (Երևանի Պետական համալսարանի «Ուսանողական գիտական աշխատությունների ժողովածու», 1948, № 4)։

³ Հայոց լեզվի ուսուցման հիմունքները միջնակարգ դպրոցում, դոցենտ Ա. Ա. Աբրահամյանի զեկուցումը, Երևան, 1951, էջ 13։

րերվում են այն բառերը, որոնք ոչ թե դրվում են հատկանիշ ցույց տվող բառի վրա հատկանիշի օբյեկտիվ հատկանիշ ցույց տալու համար, այլ որոնցով խոսողն իր վերաբերմունքն է արտահայտում այս կամ այն իրողության նկատմամբ:

Որինակներ՝ «Գուցե կա մեկը, որ ինձ կարոտով սիրում է թաքուն, լռիկ ու խոնարհ, Գուցե անցել ենք մենք իրար մոտով, Կանգնել, զրուցել, ժպտացել իրար» (Ս. Տարոնցի):

Այստեղ գուցե բառով խոսողը իրենից անկախ գոյություն ունեցող որևէ հատկանիշ չէ ցույց տալիս, այլ իր երկրայական վերաբերմունքն է արտահայտում նախադասության արտահայտած մտքի, կամ ավելի ճիշտ՝ նախադասության մեջ ներկայացված իրողության նկատմամբ:

«Իրավ, չէ՞ որ ամենանուրբն աշխատանքն իսկ ապարդյուն կանցներ, եթե նրան չխրախուսե կնոջ սերն ու ժպիտը» (Մուրացան): Այս նախադասության մեջ էլ իրավ բառով խոսողը մի այլ տեսակի՝ հաստատական վերաբերմունք է արտահայտում ամբողջ նախադասության մեջ արտահայտված մտքի նկատմամբ:

Ժամանակակից հայերենի եղանակավորող բառերն են՝ իրոք, իրավ, իրավամբ, արդյոք, արդարեւ, իսկապես, իսկապես որ, իհարկե, հարկավ, հավաստյալ, անշուշտ, անտարակույս, ահա, ահավասիկ, գո՛ւցե, մի՞գուցե, մի՞թե, թերեւ, նույնիսկ, անգամ (անգամ նա գիտե այդ մասին), ինչեւ, ինչեւիցե, կարծեմ, կարծես, ասես, գոնե, լոկ, մանավանդ, նամանավանդ, հատկապես, հո, խոմ, այո, ոչ, իբր, իբր թե, իբրեւ թե, հենց, թող («Թող դավ դնե թշնամին»), դե, մի (մի արի այստեղ), իսկ և իսկ, չլինի՞ (չլինի՞ դու ես ասել), նույնիսկ, գեթ, սոսկ, մինչև իսկ, մինչև անգամ, հաղիվ թե և այլն: Սրանց առանձնահատկություններն են՝

1. Եթե մակրայնները ցույց են տալիս հատկանիշի օբյեկտիվ հատկանիշը, ապա եղանակավորող բառերը այս կամ այն երանգն են հաղորդում նախադասության մտքին, խոսողի վերաբերմունքն են արտահայտում այս կամ այն իրողության, առարկայի նկատմամբ:

2. Դա նշանակում է, որ եղանակավորող բառերը չունեն նյութական իմաստ, և դրանով նրանք հակադրվում են ոչ միայն մակրայններին, այլև նյութական իմաստ ունեցող մյուս բոլոր խոսքի մասերին:

3. Եթե մակրայնները դրվում են հատկանիշ ցույց տվող բառերի վրա, ապա եղանակավորող բառերը դրվում են դերադանցապես նախադասությունների, ինչպես և նախադասության այլ անդամների վրա, անկախ այն բանից, թե վերջիններս ի՞նչ խոսքի մասով են արտահայտված:

4. Դրանցով պայմանավորված, եթե մակրայնները կատարում են պարագայի ֆունկցիա, որի տեսակը որոշվում է մակրայնի իմաստային առանձնահատկությամբ, ապա եղանակավորող բառերը նախադասության անդամի դեր չեն կատարում:

Եղանակավորող բառերն, այսպիսով, թե՛ ընդհանուր իմաստային տեսակետից, թե՛ կիրառական, շարահյուսական հատկանիշներով ուրույն տեղ են գրավում խոսքի մասերի սիստեմում, որի պատճառով էլ պետք է դիտվեն որպես մակրայններից դատ առանձին կարգի բառեր: Այդ բառերը մակրայնների շարքը դասելով՝ ո՛չ միայն ճիշտ չենք ըմբռնում դրանց էությունը, այլև այդ վերջին հաշվով ազդում է մակրայնների ճանաչման վրա: Եղանակավորող

բառերը, որպես խոսուղի վերաբերմունք արտահայտող բառեր, առաջին հայացքից կարող են թվալ ձայնարկություններին նման։ Սակայն դրանց միջև կան էական տարբերություններ թե՛ ձևային կամ կազմության և թե՛ իմաստային տեսակետից։

Նախ՝ առաջին տարբերության մասին։ Ի տարբերություն ձայնարկությունների, բոլոր եղանակավորող բառերը առաջացել և առաջանում են նյութական իմաստ ունեցող բառերից, մինչդեռ ձայնարկությունների մեջ այդպիսի եզակի օրինակներ կարելի է գտնել։ Բայց դա ոչ թե սոսկ պատմական կամ կազմավորման տարբերություն է միայն, այլև խիստ կերպով արտահայտվում է այդ խոսքի մասերի այժմյան ձևային հատկանիշների մեջ՝ հետևյալով։ Եթե բուն ձայնարկությունների ձևը մեծամասնությունը կազմված է մեկ, երկու, երեք հնչյուններից (ա՛, է՛, օ՛, ու՛, ի՛, ք՛, ա՛յ, օ՛յ, ու՛յ, է՛հ, օ՛հ, վա՛յ, վո՛ւյ, վա՛շ, վի՛շ և այլն), ու, ինչպես երևում է, հայերենի նույնիսկ յուրաքանչյուր ձայնավոր կարող է ձևավորվել որպես մի ձայնարկություն, ապա եղանակավորող բառերը իրենց կազմի մեջ ունեն ձևույթներ, քանի որ ժամանակին (երբ դեռ եղանակավորող բառեր չէին) զրանցից էլ կազմվել են (իհարկե <ի+հարկ+է, իրավ <իր+աւ, հարկավ <հարկ+աւ, կարծես <կարծ+ես և այլն), թեև այս ձևույթները այլևս չեն պահպանում իրենց նախկին իմաստն ու զերը։ Այստեղ կարևոր է նշել ձայնարկության, որպես այդպիսին, կազմավորման ու գիտակցման գործում յուրահատուկ առոգանության բացառիկ դերը։ մի առանձնահատկություն, որով ձայնարկությունները հակադրվում են եղանակավորող բառերին, ինչպես և մյուս խոսքի մասերին։

Իմաստային տեսակետից ևս դրանք տարբերվում են իրարից։ Ձայնարկությունները հիմնականում զգացական, զգայական վերաբերմունք են արտահայտում, իսկ եղանակավորող բառերը՝ հիմնականում մտածական, դատողական վերաբերմունք։ Եվ դա ոչ միայն երևում է այդ երկու խոսքի մասերի ընդհանուր բնույթից, այլև բնականաբար արտահայտվում է նաև նրանց տեսակների մեջ։ Այսպես, եթե ձայնարկություններն արտահայտում են հիացմունքի, ուրախության, զարմանքի, ցավի ու վշտի, զզվանքի և նման այլ վերաբերմունք, ապա եղանակավորող բառերը արտահայտում են, ինչպես ստորև կտեսնենք, հաստատում, ժխտում, երկրայություն և այլն, որոնք երևույթի, առարկայի նկատմամբ դատողական մոտեցման արդյունք հանդիսացող վերաբերմունքներ են։

Այսպիսով՝ եղանակավորող բառերը էապես տարբեր են նաև ձայնարկություններից և իրենց ուրույն տեղն ունեն խոսքի մասերի շարքում։ Նրանք արտահայտում են խոսուղի մտածական, դատողական վերաբերմունքը։

Ժամանակակից հայերենի եղանակավորող բառերը կազմության տեսակետից, մակրայների համեմատությամբ, ունեն և՛ նմանություններ, և՛ տարբերություններ։ Նմանությունների պատճառն այն է, որ եղանակավորող բառերի զգալի մասը կազմվել է մակրայներից՝ իմաստային, կերպական հատկանիշների փոփոխության շնորհիվ, բայց պահպանելով ձևը։ Որոշ եղանակավորող բառեր էլ կազմվել են ոչ ուղղակիորեն մակրայներից, բայց նրանց կազմության սկզբունքով։

Դրանց միջև կան նաև զգալի տարբերություններ։ Տարբերությունները, հետևապես և եղանակավորող բառերի կազմության որոշ յուրահատկությունները պայմանավորված են, նախ, նրանով, որ նրանք կազմվում են, մակրայից

րացի, նաև այլ խոսքի մասերից: Եղանակավորող բառերը կազմավորման հարցում հաճախ յուրահատկություններ ունեն նույնիսկ այնտեղ, որտեղ առաջին հայացքից կարող է թվալ, թե միայն նմանություն կա: Յուրահատկություններ ասելով մենք նկատի ունենք ոչ միայն բառի բաղադրիչների կցման եղանակը, այսինքն ոչ միայն բառակազմական տեխնիկան, որպես այդպիսին, այլև բառակազմական միենույն տեխնիկայի դրսևորման յուրահատկությունները, բառակազմական այս կամ այն տեխնիկան եղանակավորող բառերին առավել հատուկ և ոչ հատուկ լինելը, բարդ և ածանցավոր բառերի մեջ որոշ բաղադրիչների ակտիվ կամ պասսիվ լինելը և այլն:

Եղանակավորող բառերը ըստ կազմության կարելի է բաժանել հետևյալ տեսակների՝ պարզ, ածանցավոր, քերականական ձևերից կազմված (բառահարաբերական ձևույթներով կազմված), բարդ ու բաղադրյալ:

Պարզ եղանակավորող բառեր. — Պարզ եղանակավորող բառերը կամ կազմված են մեկ արմատից, կամ, համեմատյալ դեպք, այժմ գիտակցվում են որպես այդպիսիք և ժամանակակից լեզվամտածողությանը չեն բաժանվում բաղադրիչների: Դրանք են՝ այո, ոչ, հո, խոմ, իր, իսկ, անգամ, հենց, քող, հապա, ապա, մի, դե և այլն:

Եղանակավորման իմաստը այո, ոչ, հո, խոմ, իր, հենց, դե, քող բառերի միակ կամ գոնե հիմնական իմաստն է: Իսկ անգամ, իսկ, ապա, մի բառերն ունեն նաև այլ խոսքի մասային իմաստ, հետևապես և մտնում են նաև այլ խոսքի մասի շարքը և լեզվի մեջ հանդես չեն գալիս որպես միայն եղանակավորող բառեր:

Իսկ-ը որպես եղանակավորող բառ հանդես է գալիս գոյականների, գոյականաբար գործածված բառերի, որոշ գերանունների հետ ետադաս կերպառությունների՝ Օրինակ՝ «Ներխան իսկ գիտե և հասկանում է իրերը այնպես, ինչպես ինքն է զգում կամ երևակայում» (Իսահակյան): Անգամ բառը կարող է գործածվել և՛ նախադաս և՛ ետադաս: Օրինակներ՝ «Մրրիկի սարսափից պապանձվել էին անգամ շները» (Ս. Խանդավյան): «Բայց մահի բաղձանքի ստվերն անգամ չկար» (Իսահակյան): Դրանք երկուսն էլ որպես եղանակավորող բառ ունեն սաստկական իմաստ, նշանակում են «նույնիսկ»:

Այս երկու բառերը, ինչպես ասվեց, հաճախ են հանդես գալիս այլ իմաստներով, որպես այլ խոսքի մասերի պատկանող բառեր: Բայց որովհետև եղանակավորման իմաստը տարբեր որակ է նրանց մյուս խոսքի մասային իմաստների համեմատությամբ և ոչ թե վերջիններիս երկրորդական առումը, ուստի և պետք է այդպիսի իմաստ ունենալը համարել նրանց՝ եղանակավորող բառերի շարքը դասելու բավարար հիմք: Դա վերաբերում է նաև ապա, մի բառերին: Այս տեսակետից կարևոր ենք համարում նշել, որ իսկ բառի եղանակավորման իմաստը չի ածանցվել իսկ շաղկապի իմաստից, Դա հին հայերենի իսկ գոյականից ածանցված և նույնիսկ զրաբարում ունեցած իմաստն է, որ ձանաչվել ու գործածվում է այժմ:

Պարզ եղանակավորող բառերից ամենավաղ կազմվածներն են այո, ոչ, որոնք որպես այդպիսին, եղել են դեռևս զրաբարում, հետևապես և հայերենի նախազրաբարյան շրջանում:

Իբր բառը ևս գալիս է հայոց լեզվի նախազրաբյան շրջանից, բայց նրա իմաստի մեջ զգալի փոփոխություն է կատարվել: Գրաբարում այն ավելի շատ գործածվում էր նախադրության, ժամանակի մակրայի իմաստներով և միայն

երկրորդաբար եղանակավորման իմաստ էր արտահայտում: Մինչդեռ ժամանակակից հայերենում եղանակավորման իմաստը դարձել է նրա հիմնական իմաստը:

Հո, խոմ եղանակավորող բառերը հին հայերենում չեն եղել: Դրանք հատուկ են աշխարհարարին և շատ բարբառների:

Սի եղանակավորող բառը ծագել է մի թվականից՝ սկզբնական «մի անգամ» իմաստով:

Ածանցավոր եղանակավորող բառեր. — Գոյություն ունեն, ինչպես հայտնի է, գոյականակերտ ածանցներ, ածականակերտ ածանցներ, մակբայակերտ ածանցներ, որոնք զրվելով այլ խոսքի մասերի պատկանող բառերի վրա կազմում են համապատասխանաբար գոյական, ածական, մակբայ: Դասական և բաշխական թվականները ևս կազմվում են որոշակի ածանցներով, բայց ոչ թե այլ խոսքի մասից, այլ քանակական թվականներից: Գոյություն ունեն ածանցավոր եղանակավորող բառեր, սակայն գոյություն չունեն եղանակավորող բառեր կազմող հատուկ ածանցներ:

Առաջին հայացքից դա կարող է թվալ անօրինաչափ ու անսպասելի: Քանի որ եղանակավորող բառերն էլ բառերի հատուկ կարգ են կազմում, արդյոք տրամաբանական ու սպասելի չէ՞ր լինի, որ դրանք էլ ունենային բառակազմական հատուկ մասնիկներ՝ ածանցներ, որոնցով և հարստանար բառերի այդ կարգը: Լեզվի մեջ այդպիսի հատուկ ածանցների չլինելը բոլորովին էլ պատահական չէ, այլ արդյունք է մի այլ օրինաչափության:

Ածանցները, որոնք բառակազմական հսկայական դեր են կատարում, իրահարաբերական ձևույթներ են: Նրանք ստեղծվում և պահպանվում են իրերի (լայն առումով) հարաբերությունները բառերի մեջ, բառերի միջոցով արտահայտելու անհրաժեշտությամբ: Հասկանալի է, որ իրերն ու նրանց հարաբերությունները վերաբերում են օբյեկտիվ ռեալականությանը, մինչդեռ եղանակավորող բառերը օբյեկտիվ ռեալության դրսևորումներ չեն. նրանք որքան էլ օբյեկտիվ հիմք ունենան, այնուամենայնիվ հանդիսանում են խոսողի վերաբերմունքի արտահայտություն: Այսպիսով՝ եղանակավորող բառերի սիստեմում հատուկ բառակազմական ածանցների գոյություն չունենալը միանգամայն սպասելի է և օրինաչափական: Առանձնապես կարևոր է նկատի ունենալ այս տեսակետից եղանակավորող բառերի հակադրվելը մակբայներին: Ի դեպ, նշենք, որ հատուկ ածանցներ չկան նաև նյութական իմաստ չունեցող մյուս խոսքի մասերի սիստեմում:

Ինչպես ասվեց, այնուամենայնիվ, գոյություն ունեն ածանցավոր եղանակավորող բառեր, որոնց քանակը, սակայն, փոքր է: Դրանք են՝ անշուշտ, անտաբալույս, անկասկած, անպատճառ, իսկապես:

Ան նախաածանցով կազմված եղանակավորող բառերը զրաբարում եղել են կա՛մ միայն ածական, կա՛մ հիմնականում ածական: Ուրեմն դրանք ածականական ծագում ունեն: Ժամանակի ընթացքում աստիճանաբար ակտիվացել է դրանց պարագայական կիրառությունը, դրան ղուղրնթաց այդ բառերը հակվել են մակբայի կողմը: Ի վերջո, կորցնելով նյութական իմաստը, դրանք վեր են ածվել եղանակավորող բառերի:

Իսկապես բառը մակբայական կազմություն և ծագում ունի:

Քերականական ձևերից (կամ բառահարաբերական ձևույթներով) կազմված եղանակավորող բառեր. — Քերականական ձև ասելով նկատի ունենք հո-

լովման ու խոնարհման ձևերը: Թեև մակրայների մեջ էլ կան բերականական լերջավորություններով կամ որ միևնույն է՝ բառահարաբերական ձևություներով կազմված շատ բառեր. բայց եղանակավորող բառերն այդ հարցում ևս ունեն զգալի յուրահատկություն:

Մակրայների կազմության մեջ, ինչպես գիտենք, ամենակտիվ գեր կատարող հոլովներն են բացառականը և գործիականը: Եղանակավորող բառերի կազմավորման հարցում բացառականը պասսիվ է (այդ հոլովածից ունենք ժիայն մեկ եղանակավորող բառ՝ իհարկե), ակտիվ է միայն գործիականը, որից կազմված են հետևյալ եղանակավորող բառերը՝ առդաբե, հաբկավ, հավաստյավ, իրավ, այնուամենայնիվ, այսուամենայնիվ, իրո՛ւ, կաբձյո՛ւ:

Որն է բացառական ու գործիական հոլովների գերի այգքան զգալի տարբերության պատճառը: Փաստերը ցույց են տալիս, որ եղանակավորող բառերը, քանի որ իրենց մեջ զրսեորում են խոսողի վերաբերմունքը, կարող են առաջանալ և առաջանում են այն մակրայներից, որոնց մեջ առկա է եղանակավորման այդպիսի իմաստի առաջացման հիմքը: Որպես այդպիսի հիմք կարող է լինել որակի իմաստի առկայությունը մակրայի մեջ: Իսկ այդպիսի իմաստ ունեն ձևի մակրայները, ավելի ճիշտ՝ նրանց մի մասը: Վերջիններս կազմվում են հիմնականում և՛ ածանցներով, և՛ հոլովական ձևերից գործիական հոլովով: Ահա թե ինչու հոլովներից միայն գործիականն է ակտիվ գեր կատարում եղանակավորող բառերի կազմավորման գործում: Այստեղից արդեն հասկանալի է նաև, որ եղանակավորող բառեր կազմվում բացառական հոլովի պասսիվության պատճառը իմաստային այն յուրահատկության բացակայությունն է, այդ հոլովի մեջ, որ այնքան բնորոշված կերպով կա գործիական հոլովի և նրանից կազմված մակրայների մեջ: Բացառական հոլովից հիմնականում կազմվում են տեղի ու ժամանակի մակրայներ, որոնցից, որպես կանոն, չի կարող առաջանալ եղանակավորող բառ:

Եղանակավորող բառերի մի զգալի մասը կազմավորվել է բայերի թեքման ձևերից: Այդպիսիք են՝ կաբձևմ, կաբձես (կաբձես րե), կաբձեմ, ասես (ասես րե), գուցե, միգուցե, չլինի (չլինի րե), երևի: Բայական բաղադրիչը ակտիվ գեր է կատարում նաև շարահյուսական կապակցություններից առաջացած ինչևիցե, ինչևէ կցականներում, ինչպես և մի քանի նկարագրական կապակցություններում, որոնցով ևս խոսողի վերաբերմունքն է արտահայտվում. այդպիսիք են՝ ինչ էլ լինի, ինչ ուզում է լինի, ինչ գնով էլ լինի և այլն: Ինչպես երևում է, առավել ակտիվ գեր են կատարում բայի ևրկորող և ևրրող գեմբերը: Առաջին գեմբի բայածից կազմված եղանակավորող բառեր են՝ կաբձևմ, խնդրեմ,

Բարդ, բաղադրյալ և եկառագրական եղանակավորող բառեր.— Իսկական բարդության կազմված եղանակավորող բառեր չկան: Կցական բարդություններ են՝ ահավասիկ, րեբես, միգուցե, միբե, նույնիսկ:

Եղանակավորող բառերի կազմության մեջ որոշ գեր է կատարում րե շաղկապն իր թևական իմաստով: Այսպիսիք են, բացի միբե կցական բարդությունից, նաև հետևյալ բաղադրյալ բառերը՝ կաբձես րե, կաբձեմ րե, հաղիվ րե, ինչպես րե, երանի րե, իբբ րե, իբբե րե: Սրանց բաղադրիչներն առանձին են, թեև րե բաղադրիչն առանձին շեշտ չունի:

Բաղադրյալ եղանակավորող բառերի քանակը զրանով չի սահմանափակ-

վում: Այդպիսիք են նաև՝ մինչև անգամ, մինչև իսկ, առանց այլևայլության, ինչ խոսք և այլն:

Վերջապես կան այնպիսի բառակապակցություններ ևս, որոնք թեև չեն վերածվել մեկ բառի, բայց և այնպես իմաստով հարում են եղանակավորող բառերին. նրանցով արտահայտվում է խոսողի վերաբերմունքը այս կամ այն իրողության, երևույթի, առարկայի նկատմամբ: Այդպիսիք են՝ ինչ էլ լինի, ինչ ուզում է լինի, ինչ գնով էլ լինի (սրանց մասին խոսք եղել է բայական կազմությունների քննության առիթով), րստ երևույթին և այլն:

Եղանակավորող բառերը իմաստային տեսակետից բազմազան են: Կան հաստատական, հաստատական-ցուցական, ժխտական, զիջական, երկբայական, սաստկական, սահմանափակման, կամային վերաբերմունք արտահայտող եղանակավորող բառեր:

Հաստատական եղանակավորող բառերը ժամանակակից հայերենում համեմատաբար շատ են՝ արդարև, իսկապես, իսկապես ու, իհարկե, հարկավ, հսկայապես, իրոք, իրավ, ինչպես չէ, ինչ խոսք:

Օրինակներ՝ «Արդարև նրա համար կորուստն այնքան մեծ չէր, որքան իր իղբորը հանձնված ծրարի բովանդակությունը»: «Հարկավ, Սմբատն ուրախ էր եղբոր այս փոփոխությանը»: «Իսկապես, անուղղելի է այդ տղան»: «Իրոք, նա շարունակում էր իր մտքի թելը» (Նիրվանադադե): «Ինչ խոսք, որ եթե ֆարրիկան մասնագիտացվեր միայն մի քանի տեսակի կահույքի արտադրման ուղղությամբ, ապա գործերը այդպես անբարենաչող չէին լինի» (Թերթերից): «Ո՛հ, իհարկե, կարող է քեզ կործանել» (Ե. Չարենց): «Իսկապես ու նոր պիտի խոսեին սրտանց» (Դ. Դեմիրճյան):

Հաստատական եղանակավորող բառերի շարքը կարելի է դասել նաև ապացուցող, անշուշտ, անկասկած, անտարակույս բառերը և նմանները, որոնք հաստատման հետ միասին միաժամանակ հաճախ անհրաժեշտության անխուսափելիության իմաստ են արտահայտում:

Օրինակներ՝ «Նա կգա, անպատհառ կգա» (Բաֆֆի): «Մեզ գրեթե ոչինչ չի հասել ոչ հեթանոսական գրականությունից, ոչ էլ այն գրականությունից, որ անտարակույս գոյություն է ունեցել» (Տերյան): «Անշուշտ մի խոշոր պատճառ կա» (Շիրվանզադե): «Մենք, անկասկած, այդքան կանցնենք» (Փյուլ-Վեռն):

Հաստատականների շարքը պետք է դասել նաև այն բառեր, որը պործածվում է թե՛ առանձին՝ երկախոսությունների մեջ և թե՛ նախադասության հետ միասին՝ հաստատելով նախադասության միջոցով ներկայացված իրողությունը, երևույթը:

«— Մեկնո՞ւմ եք,— կրկին հարցրի թույլ ձայնով:

— Այո՞» (Փյուլ Վեռն, էջ 48):

— Գնա՞ց,— բացականչեց Մարթան, լսելով դռան փակվելու ձայնը:

«— Այո՛,— պատասխանեցի ես»:

«Այո՛, սիրելի Մարթա, նա այլևս չպետք է ուտի, և առհասարակ մեր տանը ոչ ոք չպետք է ուտի» (Փյուլ Վեռն):

Ոչ միայն այն բառեր, այլև հաստատական մյուս եղանակավորող բառերը կարող են գործածվել իրեն պատասխանական բառ, որով խոսողը հաստատում է խոսակցի այս կամ այն միտքը:

Օրինակներ՝

«— Մի՞թե կարծում եք, թե այդպիսի խիղախների թիվը մեծ կլինի:

— Անկասկած»:

«— Լավ, միթե ոչինչ չես տեսնում այդ թերակղզու վրա:

— Ինչպես չէ, մի լեռ եմ տեսնում»:

«— Ուրեմն, Աքսել, քեզ տաքությունն է մտահոգում:

— Իհարկե» (Ժյուլ Վեռն):

Հաստատական վերաբերմունք կարելի է արտահայտել նաև մի շարք կապակցությունների միջոցով, որոնք կա՛մ նկարագրական կազմություն ունեցող եղանակավորող բառեր են, կա՛մ այդպիսիք դառնալու ուղու վրա են կանգնած: Դրանք են՝ իսկ և իսկ, ինչ էլ լինի, ինչ ուզում է լինի, ինչ գնով էլ լինի, առանց այլևայլության, առանց այլևայլի և այլն, որոնց մեծ մասն ունի ղիջական իմաստի շատ թույլ կրանք:

Օրինակներ՝ «Իսկ և իսկ, հենց այդպես եղած կլինի» (Վ. Անանյան):

«Զինար, այս գիշեր ինչ գնով էլ լինի, մենք ամբողջ խորդենին պետք է բաղենք» (Թափալցյան): «Բանթողից չևտո ինչ ուզում է լինի կգնա, գիշերը տանր կմնա» (Թափալցյան): Առանց այլևայլության մերոնք կհաղթեն: «Բայց, ինչ էլ լինի, պետք է օգտագործել բոլոր հնարավորությունները» (Ի. Սևունց): Հաստատական-ցուցական եղանակավորող բառերն են՝ ահա, ահավասիկ:

Օրինակներ՝ «Եվ ահա հշմարտության արևը կփայլի յուր բոլոր պայծառ ճառագայթներով» (Նալբանդյան): «Բայց ահա ծերունու պղտոր հայացքն ընկավ որդու ոսկե մատանու վրա» (Շիրվանզադե): «Ահավասիկ, դու կրկին հոսում ես լուռ ու հանդարտ»: «Ահավասիկ, գրում եմ» (Ե. Չարենց):

Ժխտական եղանակավորող բառ է ոչ բառը, որը այո հաստատականի հակադիրն է. գործածվում է և՛ իբրև պատասխանական բառ տրամաբանորեն ստանալով նախադասության արժեք, և՛ նախադասության հետ:

«— Գուցե ձեզ մոտ մի որեւէ վավերաթուղթ կա:

— Ո՛չ»:

«— Բայց, համենայն դեպս, դուք խոմ շատ շեք ուշանալու:

— Ո՛չ, պ. Լիդենբրոկ, կարող եք հանգիստ լինել»:

«— Ո՛չ, ո՛չ, այդ չի լինի» (Ժյուլ Վեռն):

Մանորություն.— Բնավ, ամենևին բառերը հատկապես որպես պատասխանական բառ գործածվելիս, հարում են եղանակավորող ժխտական ոչ բառին, բայց նրանք հիմնականում մակբայ են, չեն զրկվել նյութական իմաստից: Ձիջական եղանակավորող բառեր են՝ ինչևէ, ինչևիցե, ինչ ու է, համենայն դեպս և այլն:

Օրինակներ՝ «Ինչևիցե. գլխավորն այն է, որ գիտենաք Ձեզ համար ծաղիկներ ենք քաղել» (Հովհ. Թումանյան): «Համենայն դեպս, շնորհվելու շատ ապահով միջոց ունեմ» (Ժյուլ Վեռն):

Երկրայական բառերը ցույց են տալիս խոսողի երկբայական, թեական վերաբերմունքը գործողության կատարման, այլի առարկայի, հատկանիշի եղելության նկատմամբ: Այսպիսի իմաստ արտահայտող բառերը շատ են քանակով և տարրեր՝ իմաստային կրանդներով:

Երկրայական եղանակավորող բառերը ըստ իմաստային երանդների բաժանում են հետևյալ երեք տեսակների՝ երկրայական-հավանական, երկրայական-անհավանական, երկրայական-հարցական:

Երկրայական-հավանականության, թվացողության իմաստ են արտահայտում հետևյալ բառերը՝ կարծես, կարծեմ, կարծյոք (քիչ գործածական), կար-

ծես քե, ասես, քերես, երևի և այլն: Դրանց երկրայական իմաստին զուգակցված է հավանականության իմաստը: Վերջին իմաստն էլ տարբեր շափով է առկա սրանց մեջ: Այսպես՝ քերես, երևի բառերի համեմատ մյուսներն ավելի պակաս հավանականություն են արտահայտում, նրանց իմաստը թվացողության ավելի զգալի երանգ ունի:

Օրինակներ՝ «Ձգիտեմ ինչու, այսօր, կարծես, օդը խեղդում է ինձ» (Շիրվանզադե), «Կարծես, ավելի լավ կլինի, որ դուք թողնեք շարժական կայքը» (Բաֆֆի): «Կարծես քե անձրև պիտի գա»:

Թերևս, երևի բառերի իմաստի մեջ սուբյեկտիվ, թվացողության մոմենտը համեմատաբար ետին պլանի վրա է. այս դեպքում խոսողի վերաբերմունքի օբյեկտիվ կողմն է ավելի կարևորություն ստանում, թեև դա վերջին հաշվով դրսևորվում է որպես խոսողի վերաբերմունք: Համեմատենք այդ երկու տեսակների եղանակավորող բառերով մեկական օրինակ՝ 1) Կարծես վաղը նա գալու է, 2) Երևի (քերես) վաղը նա գա: Երկու նախադասություններում էլ ընդգծված բառերը երկրայական — հավանականության իմաստ են արտահայտում, չկա հաստատման վերաբերմունք՝ գալու գործողության նկատմամբ: Բայց կարծեմ բառի համար ավելի բնորոշ է խոսողի իմանալու կամ չիմանալու մոմենտը, մինչդեռ երևի, քերես բառերի համար ավելի բնորոշ է գործողության կատարման ավելի շատ օբյեկտիվորեն անհաստատ լինելը, իհարկե, դարձյալ անցկացված խոսողի վերաբերմունքի պրիզմայով: «Տղերք, այս գոռոցը երևի մի շատ հասարակ պատճառ ունի» (Վ. Անանյան): Վաղը քերես անձրև գա՝ «Այս ոսկյա տառերը երևի մի բան են նշանակում» (Բաֆֆի):

Երկրայական-անհավանականության իմաստ են արտահայտում հետևյալ եղանակավորող բառերը՝ իբր, իբր քե, իբրև քե և այլն:

Օրինակներ՝ «Ահ, երանի մեր ծնողների թևերի տակ թերևս նույնիսկ տգետ, քան օտար երկրում հանդիպեց այն էակին, որին իբրև քե սիրեց և որին այժմ ատում է, որից իբրև թե սիրված էր» (Շիրվանզադե): «Ինչու համար է լինելու — Իբրև քե պատվի համար» (Դեմիրճյան):

Երկրայական-հարցական են զուցե, միգուցե, չլինի, չլինի քե, արդյոք, միքե, հո, խո՞ւմ բառերը, որոնք սովորաբար գործածվում են հարցական նախադասությունների մեջ, արտահայտելով խոսողի երկրայական վերաբերմունքը նախադասության մտքի կամ նրա որևէ անդամի վերաբերյալ: Նրանցից յուրաքանչյուրը ունի մյուսից տարբեր իմաստային երանգ: Այսպես, զուցե, միգուցե եղանակավորող բառերի մեջ առկա է ենթադրության որոշ թույլ երանգ, իհարկե, հարցման, տարակուսանքի հետ միասին: Օրինակներ՝ «Դու՞ցե ձեզ մոտ մի որևէ հասարակ վավերաթուղթ կա» (Ժյուլ Վեռն): «Սկզբում վախեցավ, միգուցե Պետրոսը կնոջ գլխին փորձանք է բերել» (Շիրվանզադե):

Միքե, չլինի, չլինի քե բառերի մեջ երկրայական-հարցական երանգին ավելանում է անսպասելիության, զարմացական մոմենտը: Օրինակ՝ «Միքե իրոք խեղդվում է» (Շիրվանզադե): «Չլինի՞ դու արդեն եկել ես»: Սրանք հաճախ գործ են ածվում ճարտասանական նպատակով:

Միքե բառի մեջ իմաստային այս վերջին երանգը՝ անսպասելիության երանգը, երբեմն խիստ կերպով շեշտվում է և մոտենում է ժխտման իմաստի: «Միքե դու այդքան վախկոտ ես: Բարձրացիր» (Ժյուլ Վեռն):

Հո, մանավանդ խո՞ւմ բառերը երկրայական-հարցական իմաստով գործածվում են հատկապես ժխտական կառուցվածքի նախադասություններում:

խոսողը այդպիսի նախադասություններով ցանկանում է կամ ժխտել նախադասությամբ ներկայացվող երևույթը, կամ իմանալ նրա իսկությունը, ռեալ լինելը:

Օրինակներ՝ «Իմ թշնամին հո չէ՞ս» (Թումանյան): «Խոմ դու չէիր երեկ ինձ հարցնում: Սրանք հո քո գրքերը չեն: Արգյո՞ւ սխալված չե՞ք: Հորեղբայրս խոմ չէ՞ր խելագարվել» (Ժյուլ-Վեռն):

Սաստկական եղանակավորող բառերն են՝ նույնիսկ, անգամ, մինչև իսկ, մինչև անգամ, իսկ:

Սրանք կարող են դրվել և նախադասության կամ նրա ստորոգյալի, և այլ անդամների վրա: Միայն իսկ բառն է, որ սովորաբար դրվում է, բացի ստորոգյալից, նախադասության մյուս անդամների վրա:

Օրինակներ՝ «Այնտեղ նույնիսկ կային մի քանի ավանդություններ» (Լու-Սին): «Խոսել անգամ չհամարձակվեց» (Դեմիրճյան): «Իսկ ահեղ որդին խելահեղ խմեց վերջին շիթն անգամ վերջին բաժակի» (Հ. Շիրազ): «Նա մինչև անգամ քրտնեց իր գիրուկ ուսերի վրա դրված ծանր ու ահավոր բեռան տակ» (Շիրվանզադե):

Մի քանի եղանակավորող բառեր արտահայտում են խոսողի կամքը, թելադրանքը գործողության կատարման վերաբերյալ: Դրանք կարելի է կոչել կամային վերաբերություն արտահայտող եղանակավորող բառեր: Այսպիսիք են՝ քող, դե, հապա, ապա, մի և այլն:

Օրինակներ՝ «Թող կայծեր ցայտեն քո սմբակներից, քող շանթեր տեղան մեզ վրա վերից: Թող վրադ բացեն հազար խոց ու վերք, քող քամին սուլի միշտ մահվան քայլերդ» (Ս. Վահունի): «Դե, դե մեկ էլ շուռ տվեք» (Դեմիրճյան): «Էլեռնիչ, լույսը վառիր, մի իրար տեսնենք» (Թափալցյան): «Ապա գնա տես, սեղանի վրա կլինի լրագիրը» (Նար-Դոս):

Գոյություն ունեն սահմանափակման իմաստ արտահայտող եղանակավորող բառեր, որոնք են՝ զեր, զոն (սակավ գործածվում է զոնյա ձևով), լոկ, միայն, միմիայն:

Սրանք արտահայտում են գործողությունների, հատկանիշների, առարկաների սահմանափակման իմաստ, հետևապես և կարող են վերաբերել բային, ածականին և հատկանիշ ցույց տվող այլ բառերի ու բառակապակցությունների, գոյականին, դերանվանը:

Օրինակներ՝ «Նայիր ինձ զեր մի անգամ» (Իսահակյան): «Ասա գոնյա, որ սիրում ես ինձ» (Բաֆթի): «Դու լոկ Չարենց ես, միայն Չարենց» (Չարենց): «Գո՛ւ էր, որ մահը հեռացավ զոնե մի դար ես» (Իսահակյան):

Խոսողի վերաբերմունքը այս կարգի եղանակավորող բառերի մեջ համեմատաբար ընդգծված չէ, բայց, այնուամենայնիվ, կա: Նրանց ունեցած սահմանափակման իմաստը հաճախ հենց հանդիսանում է սոսկ խոսողի կամքի, վերաբերմունքի արտահայտություն: Գործողությունների կատարման, հատկանիշների, առարկաների եղելության հարցում հնարավոր կամ, համենայն դեպս, ցանկալի շատ ելքերի վրա հույս չդնելով, կամ այդպիսի ելքերի իրականացված չլինելը նկատի ունենալով՝ խոսողը ստիպված սահմանափակվում է դրանցից մեկով, մի խոսքով սահմանափակվում է դրանց չափը:

Հարկ կա՝ արդյոք ժամանակակից հայերենում, եղանակավորող բառերից զատ, ընդունելու մի այլ խոսքի մաս ես, այն է՝ «մասնիկներ», որպես բառերի առանձին կատեգորիա: Մենք այս հարցին համառոտակի անդրադառնում ենք.

բանի որ եղանակավորող բառերը առանձին կատեգորիա դիտելու մասին հողվածիս սկզբում բերված կարծիքների մեջ միաժամանակ արտահայտված է մասնիկները ևս բառերի առանձին կատեգորիա համարելու տեսակետ, բայց մենք վերևում այդպես չմտեցանք չարցին:

Այդպիսի հարցադրումը միանգամայն որոշակի է հատկապես Ռ. Իշխան-յանի հիշյալ հողվածում: Նա մասնիկներ է համարում հետևյալ բառերը. «գեթ լով, միայն, հենց, սոսկ, թեկուզ, նույնիսկ, գոնե, մանավանդ, էլ, ևս, նաև և այլն», պատճառաբանելով, որ «ներանք ոչ թե սուբյեկտիվ գնահատման կրողներ են, այլ ցույց են տալիս սուբյեկտից միանգամայն անկախ կատեգորիաներ (ընդգծումն իմն է— Ս. Ա.)»¹:

Թվարկված բառերից վերջին երկուսը՝ ևս, նաև ժամանակակից հայերենի քերականության մեջ ճիշտ կերպով ճանաչված են որպես շաղկապներ: Մյուս բառերը, ինչպես կարելի է տեսնել վերևում, մենք դիտում ենք որպես եզանակավորող բառեր՝ սաստկական ու սահմանափակման իմաստով²:

Բանն այն է, որ հիշյալ բառերը, որոնք մենք համարում ենք սաստկական և սահմանափակման վերաբերություն արտահայտող եղանակավորող բառեր, «սուբյեկտից միանգամայն անկախ կատեգորիաներ» չեն ցույց տալիս, այլ հիմնականում հենց սուբյեկտիվ, վերաբերմունքային կատեգորիաներ: Հայտնի են օբյեկտիվ հետևյալ հատկանիշները՝ ձև, չափ, ժամանակ, տեղ (իհարկե, գործողությունն էլ առարկայի հատկանիշ է, բայց այլ կարգի): Սակայն հիշյալ բառերը այդ իմաստներից և ոչ մեկն էլ չունեն. նշանակում է, որ իսկապես սրանք օբյեկտիվ հատկանիշ ցույց տվող բառեր չեն: Նրանք խոսողի վերաբերմունքն են արտահայտում՝ զատողական, մտածական վերաբերմունքը, մի բան, որ հատուկ է եղանակավորող բառերին: Այլ բան է, որ եթե մակրայնների մեծ մասը հիմնականում, այսպես ասած, գնահատման իմաստ է արտահայտում, ապա սրանք սաստկական վերաբերմունք են արտահայտում: Բայց թե առաջինը և թե երկրորդը խոսողի մտածական վերաբերմունքն են դրսևորում երևույթների, առարկաների նկատմամբ:

Պետք է նկատի ունենալ նաև, որ վերջին հաշվով սաստկական վերաբերմունքը գնահատման յուրահատուկ արտահայտություն է: Դրանում էլ ավելի համոզվելու համար կարելի է վերահիշյալ նախադասություններում այդ բառերի կիրառությունները (էջ 74) ժամանակավորապես անտեսել և բերված նախադասությունները համեմատել զրանց մի այլ տարբերակի հետ, որոնցում գործածված չլինեն սաստկական եղանակավորող բառերը: Ասենք՝ Այնտեղ նույնիսկ կային մի քանի ավանդություններ: Եվ՝ Այնտեղ կային մի քանի ավանդություններ:

Սահմանափակման իմաստ ունեցող եղանակավորող բառերի մեջ ևս կա որոշակի վերաբերմունքի իմաստ, ինչպես տեսանք վերևում: Այստեղ մենք գործ չունենք սովորական սահմանափակումների հետ (ասենք, մեկ օր, մեկ ժամ, Բաղուր ժամ և այլն), այլ գործ ունենք, այսպես ասած, հիմնականում սուբյեկտիվ, հատկազուրկալի սահմանափակման հետ: Ավելացնենք, որ այդ կատարվում է երկեմն նաև առարկայի, հատկանիշի գաղափարը շեշտելու

¹ Երևանի համալսարանի «Ուսանողական գիտական աշխատությունների ժողովածու», 1948, № 4:

² Երանցից մի երկուսը (էլ, թեկուզ, միայն) ունեն նաև շաղկապական կիրառություններ:

նպատակով: Իսկ սրանք, ինչ խոսք, որ վերաբերումների արտահայտություններ են:

Այսպիսով՝ սաստկական և սահմանափակման իմաստ ունեցող հիշյալ բառերը մյուս եղանակավորող բառերի համեմատությամբ ունեցած որոշ տարբերությամբ հանդերձ, հիմնականում ունեն նրանց բնորոշ հատկանիշը, ուստի և դասում ենք նրանց շարքը: Թերևս «մասնիկներ» անվանումը հարմար լիներ, օրինակ, մի արգելականի, ԼԵՐ-ի (իսկույն ևեթ) համար, բայց այդպիսի երկու երեք բառի կամ կիսաբառի հիման վրա առանձին խոսքի մաս կամ բառերի առանձին կատեգորիա ճանաչելը ճիշտ ու նպատակահարմար չենք համարում, մանավանդ որ նման սակավաթիվ բառերը կամ կիսաբառերը սովորաբար հարում են բառերի որևէ կարգի, որոնց շարքը և կարելի է դասել դրանք, անհրաժեշտության դեպքում՝ թեկուզ և որոշ վերապահությամբ: